ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 18 հունվարի, 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ-2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 18-ի N 28-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և ԲՀ գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից անցկացվող կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի աջակցության «**ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ-2021**» միջազգային մրցույթը:

2. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ. Աղաբեկյան)՝ մեկօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ Կ. Ղարիբյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտական խմբերի ղեկավարների համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվության տրամադրումը,

2) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական ծրագրերի ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

3) կազմակերպել ֆինանսավորվող գիտական ծրագրերի ղեկավարների հետ ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներից տրամադրվող գումարների օգտագործման մասին համապատասխան պայմանագրերի կնքումը:

4. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ Կ. Ղարիբյան)՝ և ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝ ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը:

5. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ռ. Ասատրյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ